

Ա. Կ. ՅԱՐՄԱՆՅԱՆ

ԱՄՈՒՍՆԱՅՈՂՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

(Թուուցիկ ակնարկ)

Ներկա աշխատության նպատակն է՝ թուուցիկ գծերով լուսաբանել այն, ինչ որ անցյալում արել է հայ հասարակությունն ամուսնացողների բժշկական քննության ննթարկվելու պարտադիր սրոշումը կենսագործելու բնագավառում:

Ինչպես հայտնի է, մեզ մոտ՝ Սովետական Միության մեջ, 1927 թվի հունվարի 1-ից գործում է ամուսնացողներին բժշկական քննության ննթարկելու օրենքը: Այդ օրենքով պարզորոշ ցույց են տրված այն բոլոր հիվանդությունները, որոնք կարող են ամուսնության արգելք հանդիսանալ: Քանի որ պրոֆիլակտիկայի հարցերը սովետական էրկրում առանցքային տեղ են զբաղում առողջապահության բնագավառում, ուստի այդ օրենքը հրապարակվելով՝ հիմնականում հետապնդել է մի նպատակ, այն է՝ կասեցնել որոշ հիվանդությունների տարածումը և ստեղծել առողջ սերունդ, նկատի ունենալով այն, որ սոցիալական բարեկեցությունը, ժողովրդական մասսաների հզորությունն ու ամրությունը հիմնված է առողջ հասարակության վրա:

Ամուսնացողների բժշկական քննության հարցերն անցյալում որոշ քաղաքակիրթ երկրներում հաճախ են առաջ քաշվել և բազմակողմանի քննության առնվել, սակայն դա ոչ մի տեղ չի կենսագործվել: Ամեն անգամ, երբ քննարկվել է մինչամուսնական բժշկական քննության հարցը, ապա սա մերժվել է զանազան անհարմարությունների պատճառով, կամ որպես քաղաքացիների ազատության սահմանափակման հետ կապված մի հարց, կամ թե մերժվել է ալլ նկատառումներով: Այնուամենայնիվ, հասարակական մի շարք խոշոր գործիչներ, մեծ մասամբ բժիշկներ (Ռուբեն, Ֆորել և ուրիշներ) ամուսնությունն առողջացնելու նպատակով՝

հուանդուն պահանջել են հրատարակել մինչ ամուսնական բժշկական քննության օրենքը:

Հետաքրքրական է, որ ամուսնացողների բժշկական քննության հարցն առաջին անգամ պարտադիր որոշման ձև է ընդունել հայ հասարակության մեջ: Անցյալում այդ հարցը ոչ մի երկրում չի հարուցվել: Դրան վերաբերող մի շարք առաջարկություններ երևան են եկել միայն նորագույն ժամանակներում:

Հետև. անցյալում, առողջ սերունդ ստեղծելու նպատակով՝ առանձին փորձեր են արվել կարգավորելու ամուսինների փոխհարաբերություններն առողջություն պահպանելու հարցերի ասպարեզում: Այսպես, օրինակ, հին Սպարտայում գոյություն է ունեցել միայն առողջ, կենսունակ, նորածին մանուկներին պահպանելու և ընդհակառակն, թույլ մանուկներին ոչնչացնելու մի սովորություն: Հին Հռոմում ամուսնությունն անյավեր էր համարվում, եթե հաստատվում էր ամուսիններից մեկի հոգեկան աննորմալությունը կամ չբեր լինելը: Հնում մի շարք երկրներում հրատարակվում և օրենքներ էին կիրառվում ամուսնալուծության վերաբերյալ. դրա համար մեծ մասամբ առիթ էին ծառայում կնոջ աննորմալությունը կամ չբեր լինելը: Ժամանակակից մի քանի երկրներում ամուսնալուծությունը թույլատրվում է սովորական հարբեցողության դեպքում, կամ երբ առկա են անբուժելի վարակիչ հիվանդություններ, անկարողություն և այլն (ԱՄՆ, Շվեդիա, Նորվեգիա):

Ամուսնության և ընտանիքի հարցերով զբաղվել են հայ հոգևոր կազմակերպությունները այն ժամանակից սկսած, երբ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն է ճանաչվել: Դեռևս 4-րդ դարում, Աշտիշատի առաջին եկեղեցական ժողովում, որին մասնակցել են նաև աշխարհականների ներկայացուցիչները, հատուկ կանոնական որոշումներ են ընդունվել, որոնցով մերժվել է ամուսնությունն արյունակից ազգականների հետ, արգելվել սեռական մերձեցումը դաշտանի ժամանակ, ինչպես և պատիժ էր սահմանվել արհեստական վիժում կատարելու համար: 447 թվին՝ Շահապիվանի ժողովի որոշմամբ՝ եկեղեցին իր բացառիկ իրավասության տակ է առել ամուսնության հետ կապված բոլոր հարցերը: Հետագա եկեղեցական ժողովներում (Ղվինում, Պարտավում և այլն) հանգամանորեն քննության են առնվել սեռական առողջապահության և ամուսնական առողջապահության հետ կապված հարցերը: Նմանօրինակ հարցերին եկեղեցու միջամտելն այնքան նշանակալից է եղել, որ հոգևորականները՝ կուսակրոններն ու քա-

հանաները զբաղվել են նույնիսկ կանանց ծննդաբերության և բուժման խնդիրներով:

Մեր ձեռքն է հասել Գրիգոր Մազիստրոսի մի թուղթը Սարգիս վարդապետին հասցեագրված, որից երևում է, որ այդ վարդապետը մանկաբարձությամբ է զբաղվելիս եղել (Լ. Ա. Հովհաննիսյան): Նույնն է երևում նաև Ալավկա որդի Դավթի «Կանոնից» (11—12-րդ դար), որից պարզվում է, որ քահանաների վրա հատուկ պարտականություն է դրված եղել հսկողություն ունենալու որոշ մանկաբարձական օպերացիաները (պտղաշրջում, էմբրիոտոմիա՝ բարդ ծննդաբերության դեպքում) իր ժամանակին կատարելու նկատմամբ, ինչպես և իրավունք է վերապահված եղել տուժանք դնելու հակաբեղմնավորման միջոցները գործադրողների և արհեստական միժեցում կատարողների վրա (Գ. Գ. Հարությունյան):

13-րդ դարում, երբ Հայաստանում բժշկականությունն ամբողջովին գանձվելիս է եղել աշխարհական բժիշկների ձեռքին, հոգևորականները, ինչպես, օրինակ՝ Հովհաննես Երզնկացին, իրենց քարոզներում շոշափել են դաշտանի և հղիության ժամանակ տեղի ունեցող սեռական հարաբերության վնասակար լինելու հանդամանքները: Հովհաննես Երզնկացին շարադրել է մի շարք կանոններ, որոնք վերաբերում են սեռական առողջապահության բնագավառին (Մատենադարանի ձեռագիր 5349):

Ամուսնացողներին վերաբերող օրենքներ գտնում ենք նաև Մխիթար Գոշի «Պատաստանագրքում» (1184 թ.): Ըստ այդ Դատաստանագրքի՝ լուրջ ցավերով կամ արատներով տառապող հիվանդները զրկվում էին ամուսնանալու և դրանով իսկ ամուսնության սկզբունքը «պղծելու» իրավունքից: Այդ օրենքը խախտելու դեպքում՝ մեղավորների դուշբի կեսը բռնագրավվում էր և իրենք էլ երեք ամսով պատժի էին ենթարկվում: Ամուսնանալու իրավունքից զուրկ էին բորոտները, քոսով տառապողները, դույզ աչքով կույր կանայք (քանի որ կույր կինը չէր կարող երեխաներ դաստիարակել ու տնտեսություն վարել), խուլերն ու համբերը (ինչպես տղամարդիկ, այնպես և կանայք): Վատ հիվանդության դեպքում՝ ամուսնություն չպետք է կնքվի, իսկ եթե արդեն կնքվել է և եթե մի յոթնօրյակից հետո ամուսինը չի առողջանում, ապա ամուսնությունը լուծվում է: Այս հոգվածի վրա անդրադարձել են եկեղեցու այն միջոցառումները, որոնք ժամանակին նշված են եղել եկեղեցական ժողովների կանոններում:

Այսպիսով հայկական եկեղեցին իր կազմակերպման հենց առաջին օրից աշխատել է իր տնօրինության և իրավասության տակ առնել ամուսնության առողջապահության վերաբերող բոլոր հարցերը: Այդ հին ավանդները եկեղեցին պահպանել է մինչև 19—20-րդ դարերը:

Բժիշկ Բաբայանն իր «եկեղեցական առողջապահություն» աշխատության մեջ ամուսնության վերաբերյալ ասում է, որ հայ եկեղեցին երկու դրույթ էր սահմանել՝ ա. արգելել ազգակցության 6—7 աստիճանից ցածր ամուսնություն, և բ. պահանջել ամուսնացողներից լիակատար առողջություն և ժառանգական մաքրություն՝ ապագա սերնդի առողջությունն ապահովելու համար: Եկեղեցու սպասավորները և հատկապես քահանաները պարտավոր են հսկել, որպեսզի ամուսնացողներից հոգեկան կամ մարմնական թերություն ունեցողը չարժանանա ամուսնության:

Հայ բժիշկներից առաջինը Գրիգոր Քոչարյանն էր, որը սիֆիլիսի տարածումը կանխելու նպատակով 1881 թ. հանձնարարեց ամուսիններից բժշկական վկայական պահանջել առողջության մասին:

Հետագայում հայ պարբերական մամուլում հրապարակվել են բժ. բժ. Շահպարտյանի, Վ. Արծրունու, Բ. Աղասարովի, Ա. Խատիսովի, Ա. Ա. Շխյանի, Պոլսի բժիշկ Տաղավարյանի, Լ. Ս. Օհանջանովի, ինչպես և ազգագրագետ Ե. Լալայանի հոգովածները: Սրանց մեջ համառոտ են քարոզում ու պաշտպանում էին ամուսնացողներին պարտադիր բժշկական քննության ենթարկելու անհրաժեշտությունը, որով հնարավոր էր կանխել որոշ հիվանդությունների տարածումը և նպաստել երիտասարդ սերնդի առողջ զարգացմանը:

Ամուսնացողների բժշկական քննության վերաբերյալ առաջին «կոնդակը» հրատարակել է Մկրտիչ Ա. կաթողիկոսը (Խրիմյան): Նա 1904 թ. նոյեմբերի 3-ին առաջարկեց թեմական առաջնորդներին՝ հրահանգել թեմերի համայնքներին, որ քաղաքներում հոգևոր մարմինները բժշկական վկայական պահանջեն ամուսնացող տղամարդկանցից վեներական հիվանդությունների նկատմամբ և միայն այդ դեպքում ամուսնության իրավունք տալ, իսկ գյուղական բնակիչներից նման վկայականներ պահանջել միայն այն դեպքում, եթե նրանք հնարավորություն ունեն ձեռք բերելու այդպիսիները: Կաթողիկոսական կոնդակը որոշ շահով լրացրեց Վրաստանի թեմական առաջնորդ Սաթունյան եպիսկոպոսը 1904 թ.

նույնմբերի 9-ին: Առաջնորդական հրահանգով սա պահանջում էր բժշկական վկայական ստանալ երկրորդ անգամ ամուսնացող այրիներից և միայն այդ դեպքում թույլ տալ նրանց ամուսնանալ, ինչպես և արգելել այնպիսիների ամուսնությունը, ովքեր տառապում են տուբերկուլյոզով:

Հիշյալ կաթողիկոսական կոնդակն ու առաջնորդական հրահանգը ճշտորեն կանոնարկեցին, կարգավորեցին միայն այն, ինչ լուսաբանված է եղել հին ավանդներով և հասարակայնության պահանջով: Այդ պաշտոնական որոշումները մեծ աղմուկ բարձրացրին և քննադատության ենթարկվեցին մամուլում: Կովկասյան բժշկական բնկերության մեջ այդ հարցի կապակցությամբ առաջացած վիճաբանությունների ժամանակ շատերը արտահայտվեցին ամուսնացողների բժշկական քննության դեմ, բայց և այնպես բժիշկ ն. Խատիսովի առաջնորդությամբ ընտրված 9 հոգուց կազմված բժշկական հանձնաժողովը՝ բազմակողմանի քննարկելով ամուսնացողների բժշկական քննության հարցը, միաձայն տվել է հետևյալ եզրակացությունը.

1. Հասարակական առողջապահության տեսակետից ցանկալի է բժշկական քննության օրենք մտցնել ամուսնացողների երկու սեռի համար:

2. Զթույլատրել ամուսնանալու անբուժելի ներվային և հոգեկան հիվանդությունների դեպքում, իսկ վարակիչ և ժառանգական հիվանդությունների, ինչպես, օրինակ, սիֆիլիսի, սուսանակի, տուբերկուլյոզի և արևոհոլիզմի առկայության դեպքում շթույլատրել մինչև առողջանալը:

Սա արդեն մի մեծ նվաճում էր: Չպետք է մոռանալ, որ այն ժամանակներում նման որոշմանը օրենքի ուժ տալը մի բացարձակ նորություն էր: Բժիշկ Փաշայանը Պոլսից գրում է բժշկադիտության դոկտոր Բաբայանին. — «Ձեր ձեռնարկությունը (այսինքն բժշկական քննությունը) նորություն է ոչ միայն մեզ՝ հայերի, այլև ամբողջ Նվրոպայի համար»: Բժ. Թադևրյանը գրում է, որ ամուսնացողների բժշկական քննությունն անպայման անհրաժեշտ է, որովհետև նա կառողջացնի ամուսնությունը:

Մկրտիչ Ա. կաթողիկոսի կոնդակից շատ ժամանակ շանցած՝ ամուսնացողների բժշկական քննության օրենք է հրատարակվում ԱՄՆ-ի Ինդիան նահանգում, ըստ որում ամուսնությունը չի թույլատրվում, եթե ամուսիններից որևէ մեկը տառապում է ժառանգաբար անցնող հիվանդությամբ: Ավելի ուշ, 1909 թվին, Վաշինգ-

տոնում նույնպիսի օրենք է հրատարակվում, որի համեմատ՝ ամուսնացողներից բժշկական վկայական են պահանջում նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության մասին: Հետագայում այդ օրենքն սկսել է կիրառվել նաև մի շարք ուրիշ երկրներում:

Մեր ասածը չպետք է այն տպավորությունը թողնի, որ հայերի մեջ կենսագործված վերոհիշյալ որոշումը հայկական եկեղեցու բացարձակ ինքնուրույն նորմուծություն է եղել: Հայոց կաթողիկոսը կենսագործել է մի որոշում, սրբ պահանջել են հայ ինտելիգենցիայի առավել առաջավոր և ականավոր ներկայացուցիչները: Քանի որ վերոհիշյալ որոշումը լիովին համապատասխան է եղել հին հայկական եկեղեցական ժողովների որոշումներին և միջնադարի հայկական օրենսդրությանը, որպիսին զգալի չափով հիմնված է եղել սովորության իրավունքի վրա, ապա հենց դրանով էլ Մկրտիչ Ա. կաթողիկոսը դյուրությամբ իրագործել է վերը հիշված կանոնադրությունը, տալով նրան պարտադիր հրամանագրի ձև:

Այսպիսով, ամուսնացողների պարտադիր բժշկական քննության օրենքը մտցնելու հարցում առաջնությունն ամբողջովին և լիովին պատկանում է հայ հասարակությանը:

А. К. ФАРМАНЯН

О МЕДИЦИНСКОМ ОСВИДЕТЕЛЬСТВОВАНИИ БРАЧУЩИХСЯ СРЕДИ АРМЯН

Вопрос о медицинском освидетельствовании лиц, вступающих в брак, неоднократно подымался в прошлом в цивилизованных странах; в практической же жизни вопрос этот нигде не проводился, так как он отвергался, как связанный с различными неудобствами, ограничением свободы граждан, или по каким-либо другим соображениям. Все же отдельные крупные общественные деятели, большей частью врачи (Рубнер, Форель и др.), энергично настаивали на введение закона о добрачном медицинском освидетельствовании в целях оздоровления брака.

Интересно то, что вопрос о медицинском освидетельствовании брачующихся впервые принял форму обязательного по-

становления в армянской общине. Вопросами оздоровления семьи и брака в прошлом много занимались верховные соборы, созываемые в Армении начиная с IV века н. э. На этих соборах принимались решения о гигиене брачной жизни, беременности, половой гигиене, об абортах и пр., имевшие значение обязательных постановлений. Средневековые армянские судебники (в частности Мхитара Гоша, относящегося к 1184 г.), запрещали вступление в брак при некоторых болезнях.

Существование таких традиций привело к тому, что ряд врачей и общественных деятелей во вторую половину XIX века (Кочарян, Шахпаронян, Арцруни, Агасаров, Тагаварян и др.) стали энергично проповедывать идею добрачного освидетельствования брачующихся, в целях пресечения распространения некоторых болезней и для оздоровления потомства.

Эта кампания, энергично проводимая в прессе, повела к тому, что в 1904 году 3 ноября армянский католикос Мкртич издал указ («кондак»), в силу которого от мужчин, вступающих в брак, требовалось медицинское освидетельствование о здоровье в отношении отсутствия венерических болезней. В дальнейшем указ этот был распространен и на женщин, а также на лиц, страдающих туберкулезом. Вопрос этот оживленно дискутировался в закавказской прессе, в частности, на заседаниях Кавказского медицинского общества, порекомендовавшего расширение сферы действия этого постановления.

Следующей страной, которая ввела закон об освидетельствовании брачующихся, был штат Индиана в США, где этот закон был проведен в 1905 г.; позднее такой же закон был проведен в Вашингтоне и в других странах.

Введение этого постановления среди армян не было креатурой армянской церкви; католикос провел в жизнь постановление, которое требовали наиболее передовые и видные представители армянской интеллигенции.

Таким образом приоритет проведения в жизнь вопроса о медицинском освидетельствовании брачующихся принадлежит полностью армянской общине.